ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Նորակերտ, norakertgyux@mail.ru

«08» փետրվարի 2021թ.

գ. Նորակերտ

թիվ 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացնում ենք Նորակերտ համայնքի ղեկավարի կողմից 22.01.2021 թվականին ընդունված 02 որոշման ուղղված տարբերակը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

N 02

<<22>> հունվարի 2021թ.

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ և 18-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N1586-Ն որոշմամբ սահմանված հիմքերի վերացումը.

որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Նորակերտ համայնքի ղեկավարի 02.10.2020 թվականի թիվ 70 որոշումը:
2. Վերսկսել Նորակերտ համայնքի սեփականություն հանդիսացող 7,7հա (ծածկագիր 04-074-0107-0189) համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի բաց աճուրդով վաճառքը:
3. Աճուրդ-վաճառքի օր նշանակել 2021 թվականի հունվարի 27-ը:
4. Սույն որոշման մասին անհապաղ իրազեկել աճուրդի մասնակիցներին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ***ՍԵՐԺԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ***

2021 թվականի հունվարի 22
Նորակերտ համայնք